համարձակվում են մտնել հենց գյուղը և ողջ գյուղը կալի ժամանակ ծածկվում է դարմանի փոշիով։ Տների առջև տեղ-տեղ երևան են գալիս պարտեզներ։ Այսպես են Արիքլու գետի հովտում՝ Շաղաթն ու Բարձրավանը (Մազրան). Որոտանի (Բազարչայի) վրա՝ Անգեղակոթն ու Սիսիանը (Սիսավանը) մի փոքր անանուն գետակի երկու ափերին՝ Բռնակոթը, որի տակ լայն բացվում է Սիսիան-Այրիգետ (Այրիչայ) գետերի միացած գետաբերանը. Սիսիան գետի ավազանում՝ Ալիլուն (այժմ Սալվարդը), Հացաշատը (նախկին Սիսիանը), Այրի գետի հովտում՝ Ախլաթյանը, Բնունիսն ու Տոլլորսը. գետաբերանի մոտ՝ Ուղը, Լորի հովտում՝ Լեռնաշենը (Շենաթաղն), Լորը, Դարբասը (Դարաբասն) ու Լծենը։ Միայն Տաթևի տակից բխող աղբյուրներն են, որ չեն լայնացրել իրենց ափերը և իրենց կազմած վտակի լանջերին չեն հյուրընկալել ոչ մի գյուղ։ Տաթև գյուղը քարագլխին բազմած իր վանքով, դիմացի Տանձատափն, ավելի վեր՝ Սվարանցը ազատ փռել են իրենց շենքերը փոքրիկ սարահարթի վրա, որը պաշտպանված է, գավառակի գետահովիտներում տեղավորված գյուղերի պես, քամիներից և նրանց պես օգտվում է բազմաթիվ աղբյուրների վճիտ և առատ ջրերից։

Սիսիանի գյուղերից մեծ մասը ամրոց չունի, ոչ էլ պաշտպանողական կամ դիտողական աշտարակ, չնայած որ շարունակ վտանգի մեջ է եղել Նախիջևանի կողմերից սպառնացող հարձակումներից։ Վտանգի ժամանակ հնուց բնակչությունն իր գույքով և անասունով քոչել է հովիտների վերին կողմերը, կոնակը տվել Բարգուշատի լեռնաբազուկին և այնտեղ փակվել՝ կառուցելով ժամանակավոր ամրություններ հովիտների նեղ անցքերում։ Նույնիսկ Տաթևի Օրբելյանները և Բռնակոթի Մելիք-Թանգյանները, ինչպես և Որոտանի (Բազարչայի) մյուս ափին Անգեղակոթի Սաֆրազբեկյանները չեն աշխատել վտանգի ժամանակ փակվել ամրոցի մեջ։

Կապանում, որը գավառի ամենաանտառոտ մասն է, որտեղ անտառները սկսվում են Շուռնուխի մոտից և համատարած շարունակվում են դեպի հարավ, մինչև Մեղրու (Զավնդուրի—Մեղրի-Գյունեի) լեռնաբազուկը, բացի այն վայրերից, որտեղ նրանք ոչնչացված են մարդու ձեռքով, գյուղերը տեղավորված են ծառերից ազատված հողամասերում։ Այստեղ էլ անասնապահությունը և որսորդությունը վաղուց են ետ մղված հողամշակությամբ, որի համար կլիմայական պայմանները առանձնապես բարենպաստ են։ Որոշ վայրերում անտառները փոխարինված են թթենիների պուրակներով, օրինակ՝ Ողջի գետի ստորին հովտում, հանքավայրերի կողքին։

Ներկա վարչական շրջանը ընդգրկում է առավելապես Բարգուշատի լեռնաբազուկի արևելյան ճյուղավորությունները։ Այդ ճյուղավորություններից մեկը ձգվում է Կյամբիլ գագաթից (3417 մ) դեպի հարավ-արևելք. նրա արևելահայաց կողին քսվում է Աճանան (Խալաջ կամ Հալաջ) գետը՝ Ողջի գետի ձախակողմյան օժանդակը, և լանջին զետեղված են Առաջաձոր և Կավարտ գյուղերը։ Ավելի հյուսիս նույն Կյամբիլից դեպի արևելք բազմած Խաչքար գագաթից բաժանվում են երկու այլ ճյուղավորություններ։ Նրանցից աջակողմյանն Արջաձորի (Առաջաձորի) ճյուղավորության պես շեղվում է դեպի հարավ-արևելք և կոչվում է Կարմիր վանքի (Ղըզըլ-վանքի) սարեր, նրա մի լանջին շարված են Բռկենանց, Սևաքար և Արծվանիկ գյուղերը, հակառակ լանջին՝ Ուժանիսը և Եղվարդը։ Ձախակողմյան ճյուղավորությունը շարունակվում